ԿՈՆՑԵՌՆ ԴԻԱԼՈԳ

Փաստաբանական գրասենյակ

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀՀ-ՈՒՄ

ԾԱՆՈՒՑԱԹԵՐԹԻԿ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՆՈՅԵՄԲԵՐ 2017

Ի՞ՆՉ Է «ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԸ»

■ Ապահովված իրավունքը **գրավի իրավունքին նույնական ինստիտուտ է, որը կիրառվում է շարժական գույքի դեպքում:** Կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ (որոշ բացառություններով) շարժական գույքի գրավի ինստիտուտ ներկայումս գոյություն չունի. դրա փոխարեն այս պահին կա միայն շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի ինստիտուտ:

■ Ապահովված իրավունքի ինստիտուտի ներդրումից հետո **գրավի ինստիտուտը մնացել է կիրառելի միայն անշարժ գույքի և հետևյալ շարժական գույքերի նկատմամբ՝ տրանսպորտային միջոց, բանկային հաշիվ, դեպոզիտ (ավանդ), արժեթղթեր:**

■ Ապահովված իրավունքը որևէ **շարժական գույքի, գույքային իրավունքի կամ պարտավորական իրավունքի (այսուհետև՝ «շարժական գույք»)** նկատմամբ պարտատիրոջ ունեցած իրավունքն է, որի միջոցով ապահովվում է պարտատիրոջ հանդեպ պարտապանի ունեցած պարտավորության կատարումը: Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի **ապահովված իրավունքի առարկայի արժեքից առաջնահերթության կարգով** (մյուս պարտատերերի հետ համեմատած) **իր պահանջի բավարարում ստանալ:**

Ի՞ՆՉԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱ

■ Ապահովված իրավունքի առարկա կարող է լինել ցանկացած շարժական գույք և գույքային իրավունք, **բացառությամբ՝ 1) շրջանառությունից հանված գույքի**, **2)** պարտատիրոջ **անձի հետ անխզելիորեն կապված պահանջների** (ալիմենտի պահանջ, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջ և այլն), **3)** պետական (գանձապետական) անվանական **այն արժեթղթերի**, որոնց թողարկման պայմաններով նախատեսված են, որ այդ արժեթղթերը **գրավադրման ենթակա չեն**, և **4)** այն իրավունքների, որոնց **զիջելն այլ անձի արգելված է օրենքով:**

■ **Ապահովված իրավունքի առարկա կարող են լինել, օրինակ,** կանխիկ դրամական միջոցները, մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքները, շրջանառության մեջ գտնվող ապրանքները, պահանջի իրավունքները, հաստոցները, սարքավորումները, գյուղատնտեսական տեխնիկան, գյուղատնտեսական մթերքը, կենդանիները, թռչունները և այլն:

■ **Անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը, բանկային հաշիվը, դեպոզիտը (ավանդը) և արժեթղթերը** չեն կարող լինել ապահովված իրավունքի առարկա: Դրանք կարող են լինել **գրավի առարկա**:

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ապահովված իրավունքի ծագումը տեղի է ունենում օրենքի կամ **ապահովման պայմանագրի ուժով**: Այսինքն՝ **որպեսզի պարտավորության կատարումն ապահովված լինի շարժական գույքով**, անհրաժեշտ է կնքել ապահովման պայմանագիր, որից հետո այդ **պայմանագիրը պետք է գրանցվի:** Գրանցման համար գանձվում է **պետական տուրք՝** յուրաքանչյուր շարժական գույքի համար 2.000 ՀՀ դրամի չափով:

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ

- Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցումը նախկինում իրականացնում էր ՀՀ արդարադատության նախարարության շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման գործակալությունը, որը նաև վարում էր ապահովված իրավունքների **գրանցամատյանը** և **տեղեկություններ էր տրամադրում այդ գրանցամատյանից**:
- **2017 թ. մայիս-հունիս ամիսներին կատարված փոփոխությունների ուժով** ՀՀ արդարադատության նախարարության շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման գործակալության լիազորությունները փոխանցվել են **ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:**

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ

Ապահովված իրավունքի առարկայի վրա բռնագանձում կարող է տարածվել՝ 1) դատական կարգով՝ **գրավի առարկայի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու կանոններով,** 2) առանց դատարան դիմելու՝ **գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու կանոններով** (եթե դա նախատեսված է ապահովման պայմանագրով կամ պարտատիրոջ և պարտապանի միջև կնքված գրավոր համաձայնությամբ):

ԻՆՉԻ՞Ն ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ

- Նախ, պետք է հաշվի առնել, որ եթե գույքն անշարժ չէ և չի հանդիսանում տրանսպորտային միջոց, բանկային հաշիվ, դեպոզիտ (ավանդ) կամ արժեթուղթ, ապա դրա նկատմամբ պետք է կնքել ոչ թե գրավի, այլ ապահովված իրավունքի պայմանագիր: Պետք է հաշվի առնել, որ գրավի պայմանագրի կնքման դեպքում միայն անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի) կամ արժեթղթի գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառուն) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարվելու դեպքում գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Այսինքն՝ գրավի պայմանագրի կնքման դեպքում «նախապատվության իրավունքը» գործում է միայն վերը նշված գույքերի նկատմամբ:
- Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկան պետք է բավարար չափով նկարագրվի: Այն դեպքում, երբ ապահովված իրավունքի առարկան հնարավոր է որոշել որոշիչ կամ նկարագրական հատկանիշներով, ապա ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրությունը պարտադիր է:
- Գրանցված ապահովված իրավունքը նախապատվություն ունի նույն շարժական գույքի վերաբերյալ չգրանցված ապահովված իրավունքի նկատմամբ:
- Ավելի վաղ գրանցված ապահովված իրավունքը նախապատվություն ունի նույն շարժական գույքի վերաբերյալ ավելի ուշ գրանցված ապահովված իրավունքի նկատմամբ:

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
- «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենք,
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք,
- ՀՀ կառավարության 2015 թ. հունիսի 10-ի N 633-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 2-ի N 860-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2015 թ. մայիսի 14-ի N 511-Ն որոշում,
- ՀՀ արդարադատության նախարարի 2015 թ. հոկտեմբերի 9-ի N 513-Ն հրաման:

ԿՈՆՑԵՌՆ ԴԻԱԼՈԳ

Փաստաբանական գրասենյակ

Հասցե՝ ՀՀ ք. Երևան 0025, Չարենցի 1, 2-րդ հարկ, 207 գրասենյակ
Հեռ.՝ +374 10575121
+374 60278888
Ֆաքս՝ +37410574779
Էլ. հասցե՝ info@dialog.am
www.dialog.am